

նօթանայ, ետ կեցուց զԳէորգ խորհրդէն, եւ ուզեց ինք անմիջապէս Պոլիս երթալ եւ հոն Ահաբնոյ ստութիւնները գործով յանդիմանել: Փութաց ի Կ. Պոլիս եւ Յակոբայ հետ ողջագուրեցաւ: Յակոբ, որ արդէն Սահակայ նամակն առած էր եւ Սարգսի դէմ սաստիկ գրգռուած՝ ուզած էր անմիջապէս արքունի Գուռը գրել եւ Սարգսի աքսորման հրամանագիրն հանել: Սակայն իր փոխանորդն Աղու Սամուէլ վ. Երզնկացի, ետ կեցուց զինք՝ ըսելով թէ նախ պէտք է փորձել Սարգսի լեզուն ու վարմունքը: Յակոբ անսնելով Սարգսի սէրն, անկեղծութիւնն ու անմեղութիւնը, սիրով վարուեցաւ հետն, սակայն սրտին մէջ միշտ կասկած ունէր, որ Սարգիս կրնայ Պատրիարքութիւնը խլել իրմէ:

Այստեղ ընդհատելով Սարգսի գործունէութիւնը, կ'ուզեմ յիշեալ եւ վարն ալ յիշուելի Սամուէլ վարդապետի վրայ տեղեկութիւն տալ, եւ այն՝ նոր տեղեկութիւններ:

Սամուէլ վ. Երզնկայի՝ Յովհ. Կոլոտ Պատրիարքին վերջին աշակերտներէն էր: (Սարգիս Դպիր Յովհաննիսեան, ձեռագիր: «Կոլոտ» էջ 71:) Ծնած էր 1706ին. Եպիսկոպոս ձեռնադրուելու տարին ծանօթ չէ. «1749ին Առաջնորդ կ'ընտրուի Պրուսայի, սակայն տակաւին ինքը չեկած, պատրիարքութենէ հրաժարեալ Նալեան Յակոբ Եպս. կու գայ Պրուսա.» (Վանքեան Արիստ. Եպ. «Բիւզանդիոն» 1906 թ. 3127:) Նալեանի վերստին պատրիարքութեան ժամանակ (16 Մայ. 1752—1764 Մայ. 14.)